8. մատնաչափն անուանի		մի քիլ
16 մատն	»	մի ոտնաչափ
40 մատն	»	մի քայլ
80 մատն	»	մի գիրկ
125 քայլն	»	մի ասպարէզ
1000 քայլն	»	մի մղոն
3000 քայլն	»	մի ֆարսաղ

Այսպէս չափեսցի երկիր և ամենայն զոր ինչ չափելոյ։

ԳԼՈՒԽ ՃԷ.

Բոլոր երկիրն հայոց քլաւ քայլիւ և ասպարիզաւ չափեսցի, և ըստ սահմանի նախնեաց լայնատարածութիւն ամենայն աշխարհաց բլրիւ, դեռօրէիք, աղբերամբ և լճակաւ կարգադրեսցի սահմանս զի մի ոք իշխեսցի աւելացուցանել, կամ պակասեցուցանել քիլ մի տեղի։

ԳԼՈՒԽ ՃԸ.

Ով ոք 'ի պաշտօնէից առանց պատճառոյ տկարութեան ծուլասցի մտանել 'ի հարկս իւր, հատուցանէ տուգանս հինգ դահեկան երծաթ մինչև երիս անգամ եթէ լրբութեամբ հատուցանէ և ոչ կագաղրի, անձն իւր մտցի 'ի բանտ 12 աւուր ժամանակաւ։